

հետեւող ուրիշ ազգաց ալ (Փի․ Ճոք․ 19)։
 Կարծեմ թէ այս ամբողջական լուացումն
 իսկ կ'իմանայ Մանդակունին, երբ կ'ըսէ
 արանց համար՝ թէ խնճոյքէն յառաջ հո-
 գածութեամբ մը «փութան ի լուսնայ» (34)։
 — Այս գործն երբեմն ըստ պահանջելոյ
 հարկին կը կատարուէր նոյն իսկ կոչնա-
 տիրոջ տանը մէջ։ Խաղ ընդունելով իւր
 եզանց գողերը, «հրաման տայր լուսնայ
 զանձն նոցա, եւ դնէր ճաշ առաջի նոցա»
 (Փաւս․ 108)։ Նաեւ մեծն Ներսէս՝ խո-
 նարհութեան բարձրագոյն օրինակաւ՝ իւր
 կերակրած աղքատները նախ «իւրովք ձե-
 ոօքն լուսնայր զամենեսեան» (նոյն, 77)։
 Բայց զիսելի է՝ որ այս երկուքն ալ ե-
 կեղեցական են, եւ իրենց ըրածն աշխար-
 հականաց եւս վերագրելի չէ։ Ոսկերերան
 նոյնը կը թելադրէր նաեւ Բիւզանդացի
 ազնուականաց, ըսելով. «Եթէ աղտեղի
 եւ գարշելի է (աղքատը), նախ լուսն եւ
 ապա տանիցիս ի սեղան ըս» (Թիլթ․ Ա,
 529)։

Կաղանկայտուացին երկրորդ ձեւ մ'ալ
 կ'աւանդէ։ Աղուան անապատական մը հիւր
 կ'երթայ համազգի մենաստանի մը. եւ եղ-
 բարք «լուսնայր զոտս (նորա՛) ճաշակէր»
 (55)։ Յունական (Դար․ Ա, 1274), հրէ-
 ական (Ղկ․ Է, 44) եւ նոյն իսկ յիսուս-